ՄԻՔԱՅԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

(համառոտ ակնարկ)

Հետազոտության գլխավոր նպատակն է ուսումնասիրել 17-րդ դարի Նոր Ջուղայի մանրանկարչական դպրոցի նշանավոր վարպետների կողմից գրված եւ պատկերազարդված Աստվածաշնչերը եւ Ավետարանները[1]: Նկատենք, որ Նոր Ջուղայի դպրոցն ընդգրկում էր մոտ 15 գրչության կենտրոն, որտեղ ստեղծվել են մեծ թվով մատյաններ: Պատկերագրությունը եւ ոճը, որոնք զարգացում են ապրել տվյալ տարածաշրջանում 17-րդ դարի առաջին քառորդից մինչեւ 1721 թ. (աֆղանների ներխուժման թվականը), պահպանում են այս դպրոցի բնորոշ առանձնահատկությունները:

Աշխատանքի ընթացքում ուսումնասիրվում են Նոր Ջուղայի մանրանկարչական դպրոցի զարգացման օրինաչափությունները, փոխադարձ կապերն ու հարաբերությունները հայ գրքարվեստի այլ կենտրոնների հետ, ինչպես՝ Կոստանդնուպոլիս, Վասպուրական, Ամիդ, Սեբաստիա, Ղրիմ, Լեհաստան եւ Ռումինիա: 16-17-րդ դարերի ընթացքում Հայաստանում մշակութային եւ տնտեսական կենտրոնների զարգացումը եւ հայ գաղութների երեւան գալը Եվրոպայում նպաստել են հայկական վանքերում արվեստի վերածննդին: Սպահանը (կամ Իսֆահանը)՝ Պարսկաստանի ամենանշանավոր կենտրոններից մեկը, այս բացառիկ երեւույթի լավագույն օրինակն է: 1605-1607 թվականներից սկզբնավորվում է Նոր Ջուղայի հայկական գաղութը՝ որպես Սպահանի արվարձան[2]: Կառուցվում են նոր եկեղեցիներ գրչատներով[3], որտեղ աստիճա-

---

[1] Դոկտորական աշխատանքիս թեման է «Նոր Ջուղայի մանրանկարչական դպրոց (17-րդ դար)», որն իրականացնում եմ Երուսաղեմի Եբրայական համալսարանի հայագիտական ամբիոնին կից: Աշխատանքի ելակետային դրույթներն էլ դարձել են սույն շարադրանքի նյութը:

[2] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, *Պատմութիւն*. Վաղարշապատ, 1896; V. S. Ghougassian, *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century*. Armenian Texts and Studies 14, edited by M. E. Stone, Atlanta, 1998:

[3] Ինչպես օրինակ՝ Սուրբ Հակոբ Մծբնեցի Հայրապետ (1607 թ.), Սուրբ Նազարեթ (1609 թ.), Սուրբ Գեւորգ եւ Սուրբ Սարգիս (1611 թ.), Սուրբ Աստվածածին (1613 թ.), Սուրբ Ստեփանոս (1614 թ.), Սուրբ Հովհաննես Մկրտիչ (1621 թ.), Սուրբ Կատարինե (1623 թ.) եւ այլն՝ տե՛ս **Լ. Գ. Մինասեան**. *Նոր Ջուղայի եկեղեցիները*, հ. Ա., Նոր Ջուղա, 1992:

նաբար ձեւավորվում է «Նոր Ջուղայի մանրանկարչական դպրոցը» իր մի շարք այնպիսի տաղանդավոր վարպետ-նկարիչներով, ինչպիսիք են՝ Յակոբ Ջուղայեցին, Զաքարիա Վանեցին, Ստեփանոս Ջիք Ջուղայեցին, Սարգիս Մոկացին, Խաչատուր Խիզանցին, Մեսրոպ Խիզանցին **(նկ. 1)**[4]*, Խաչատուր վարդապետ Կեսարացին, Գասպար երեցը* **(նկ. 2)***, Բարսեղ կրոնավորը, Գրիգոր Համազասպյանցը, Աստվածատուր Ջուղայեցին, Հայրապետ Ջուղայեցին* **(նկ. 3)***, Մարտիրոս քահանան* **(նկ. 4)***, Բարղամը* **(նկ. 5)** *եւ ուրիշներ: Արեւելյան եւ արեւմտյան գեղարվեստական ավանդույթների միաձուլումը դրսեւորվորվել է այս վարպետների ստեղծագործությունների մեջ (պատկերագրություն, գույն, հորինվածք եւ գծանկար): Աստիճանաբար առաջացել է էկլեկտիկ*[5] *յուրահատուկ նորջուղայական ոճը, որն էլ աստիճանաբար նկարագրում եւ վերլուծում եմ: Մինչ օրս վերոհիշյալ մանրանկարիչների գանագան գործերը խոր ուսումնասիրության չեն արժանացել, եւ նույնիսկ ոչ մի առանձին մենագրություն Նոր Ջուղայի հայկական մանրանկարչության դպրոցին նվիրված չի եղել:*

Ուշ միջնադարի հայ մանրանկարչության ընդհանուր անկման ֆոնի վրա, այդ դպրոցի ծաղկումը եւ ինքնատիպությունը կարելի է համարել վերջին վերելքը:

Միջնադարյան հայ գեղանկարչության հետազոտողներ Ջոն Կարսուելը, Սիրարփի Տեր-Ներսիսյանը, Ավետիս Սանջյանը, Հրավարդ Հակոբյանը ընդգծել են հայ նկարիչների ստեղծած բարձրարվեստ գործերը՝ նշելով եվրոպական կերպարվեստի ակնհայտ ազդեցությունը[6]*: Նոր Ջուղայի հայկական եկեղեցի-*

---

[4] Սույն հոդվածում առաջին անգամ են տպագրվում նկարներ 1-5 եւ 7, որոնցից 1-4 լուսանկարել եմ բնագրերից Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարյան միաբանության ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թույլտվությամբ, որի համար խորին շնորհակալություն եմ հայտնում, հատկապես աբբահայր Եղիա Քիլաղպյանին, աբբահայր Պողոս Գոճանյանին եւ պարոն Վարդան Դեւրիկյանին: Նկար 5-ը, դոկտոր Ռայմոնդ Գեւորկյանի աջակցությամբ, ստացել եմ Փարիզի ազգային գրադարանից: Իսկ վերջին երեքը՝ 6, 7 եւ 8, վերարտադրվում են պրոֆեսոր Սիրարփի Տեր-Ներսիսյանի արխիվից (Մատենադարան, տուփ II/3) եւ իր հրատարակած ալբոմից՝ S. Der Nersessian, A. Mekhitarian, *Armenian Miniatures from Isfahan,* Brussels – Antilias (Lebanon), 1986, p. 165, fig. 97 and p. 182, fig. 114:

[5] Տե՛ս **S. Der Nersessian**, *The Chester Beatty Library. A Catalogue of the Armenian Manuscripts,* vol. I, Dublin, 1958, p. XL.

[6] **J. Carswell**, *New Julfa. The Armenian Churches and Other Buildings*. Oxford, 1968, pp. 21-24; **S. Der Nersessian**, "Western Iconographic Themes in Armenian Manuscripts", in: *Byzantine and Armenian Studies,* vols. I-II (1973), pp. 611-630; Iden., *L'art arménien des origines au XVII*[e] *siècle*. London – Paris, 1977, pp. 233 and 236-237; **A. K. Sanjian**, *Medieval Armenian Manuscripts at the University of California, Los Angeles* (with contributions by Alis Taylor and Sylvie L. Merian and with the assistance of S. Peter Cowe), vol. 14, Berkeley – Los Angeles – London, 1999, pp. 26, 34 and 43; **Հ. Հակոբյան**, Հայոց տերունական սրբապատկերները, Երեւան, 2003, էջ 147-149:

ների որմնանկարներն ու հաստոցային գեղանկարները պարունակում են արեւմտյան արվեստի տարրեր[7]։ Եվրոպական գեղանկարչությունը նույնպես որոշ ազդեցություն է թողել Նոր Ջուղայի դպրոցի մանրանկարի պատկերագրության վրա՝ թե՛ հաստոցային գեղանկարի, թե՛ տպագիր գրքերի միջոցով։ Վերջիններս 16-րդ դարում հրատարակվել են Վենետիկում, Նյուրնբերգում, Կոստանդնուպոլսում, Հռոմում եւ 17-րդ դարի առաջին կեսում՝ Լեմբերգում, Միլանում, Փարիզում, Լիվոռնոյում եւ Ամստերդամում, որոնք ներթափանցել էին Պարսկաստան եվրոպացի եւ հայ առեւտրականների միջոցով[8]։

Եվրոպական կերպարվեստի գործերի հետ ծանոթությունը ազդել է Մեսրոպ Խիզանցու **(նկ. 6)**, *Մինասի* **(նկ. 7)**, *Սարգսի, Մարտիրոսի գործերի վրա. վերջինս նույնությամբ ընդօրինակում է փորագրություններ եւ օֆորտներ։ Մի ուրիշ օրինակ՝ Խաչատուր վարպետի վրձնով ստեղծված սյուժեն՝ «Թաղում»-ը, հավանաբար 17-րդ դարի եվրոպական փորագրության պատճեն է[9]* **(նկ. 8)**։ *Սակայն Նոր Ջուղայի մանրանկարիչները գլխավորապես շարունակել են ստեղծել մանրանկարներ հայկական ավանդական ոճով։*

Վերջին տասնամյակների ընթացքում Նոր Ջուղայի նկարիչ-վարպետների մի շարք մանրանկարներ քննության ենթարկվեցին Վրեժ Ներսիսյանի, Թոմաս Մեթյուսի, Հելմուտ Բուշհաուզենի եւ ուրիշների կողմից[10]։ Այդ ուսումնասիրությունները գլխավորապես նկարագրական բնույթ են կրում եւ չեն պարունակում վարպետների ստեղծագործությունների գրեթե ոչ մի վերլուծություն։ Մինչդեռ անհրաժեշտ է Նոր Ջուղայի դպրոցի մանրանկարչական գործերը համադրել գեղարվեստական այլ կենտրոնների համապատասխան պատկերների

---

[7] Տե՛ս **J. Carswell**, *Op. cit.*, pp. 21-26.

[8] Մանրամասն տե՛ս **Հ. Տէր Յովհաննեսեանց**, *Պատմութիւն Նոր Ջուղայու որ Ասպահան*, հ. Ա. եւ Բ., Նոր Ջուղա, 1880-1881, **Գ. Լեռնյան**, *Հայ գիրքը եւ տպագրության արվեստը. պատմական տեսություն սկզբից մինչեւ XX դարը*, Երեւան, 1946, էջ 43-122; E. Shütz, "The Evolution of Armenian Typographic Art in the West-European Period (16th–17th Centuries)". Papers of the Fifth International Symposium on Armenian Art *"Armenia, Crossroad of Civilizations"*, Venice, 1992, pp. 449-460; **B. Narkiss, M. Stone,** *Armenian Art Treasures of Jerusalem,* Jerusalem, 1979, p. 94.

[9] Տե՛ս **S. Der Nersessian, A. Mekhitarian**, *Op. cit.*, p. 165; F. W. H. Hollstein, *Dutch and Flemisch Etchings, Engravings and Woodcuts, ca. 1450–1700,* vol. III, Amsterdam, 1951, p. 99.

[10] **V. Nersessian**, *Armenian Illuminated Gospel-Books* (Published on the occasion of an exhibition of the same title at the British Library, 11 December 1987 – 6 March 1988), London, 1987; T. **F. Mathews, R. S. Wieck** (eds.), *Treasures in Heaven: Armenian Illuminated Manuscripts*. The Pierpont Morgan Library, New York, 1994; **H. Buschhausen**, "Armenien: 5000 Jahre Kunst und Kultur/hrsg. vom Museum Bochum", in: *Wiederentdeckung einer alten Kulturlandschaft,* Katalog. Ausstellung 14. Januar bis 17. April 1995, Tübingen, 1995.

հետ, օրինակ՝ Վասպուրականի եւ Կոնստանդնուպոլսի։

Հետազոտության ընթացքում պարզվել են ձեռագրերի գտնվելու վայրերը (ընդհամենը 36 հավաքածուներ 16 երկրներում[11])։ Բացահայտվել են ընդհանուր թվով 230 պատկերազարդ Աստվածաշունչ եւ Ավետարան[12], որոնցից՝ 177-ը, համաձայն հիշատակարաններում առկա տվյալների, պատկանում են Նոր Ջուղայի դպրոցին, իսկ մնացած 53-ը վերագրված են նրան։ Անհրաժեշտ է նշել, որ 230-ից 63 ձեռագիր պահվում է Մաշտոցյան Մատենադարանում, 12 մատյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում[13]։ Մեկ Ավետարան Հրազդան քաղաքի բնակիչ պարոն Շահմիրզա Կարապետյանի սեփականություն է[14]։ Մնացած 154 միավորը օտար երկրների զանազան հավաքածուներում են, որոնցից՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանում (14 ձեռագիր), Հալեպի Քառասուն Մանկունք վանքի մատենադարանում (1 Ավետարան), Պարսկաստանի Փերիա գավառի Հազարջրիբ, Խունգ եւ Սվարան գյուղերի Սուրբ Աստվածածին եւ երկու առանձին Սուրբ Գեորգ եկեղեցիներում (3 ձեռագիր) ու Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի մատենադարանում (76 մատյան), Թիֆլիսի Վրաստանի գիտությունների ակադեմիայի Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում (2 ձեռագիր), Սանկտ Պետերբուրգի Ռուսաստանի ազգային գրադարանում (2 մատյան) եւ Ազգային ակադեմիայի արեւելագիտական ինստիտուտում (2 ձեռագիր), Մոսկվայի Ռուս Ուղղափառ եկեղեցու առաջնորդարանում (1 Ավետարան), Վիեննայի եւ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարաններում (2 եւ 13 ձեռագիր), Վատիկանի առաքելական գրադարանում (1 Ավետարան), Լիսաբոնի Գալուստ Գյուլբենկյան թանգարանում (2 ձեռագիր), Լեյդենի համալսարանի գրադարանում (1 Ավետարան), Բեռլինի Պրուսիայի պետական գրադարանում (5 մատյան), Փարիզի ազգային գրադարանում (1 Ավետարան) եւ Անտոնյան միաբանության մեջ (1 Ավետարան), Լոնդոնի բրիտանական մ (5 ձեռագիր) եւ «Աստվածաշնչի Տուն» գրադարաններում (1 Ավետարան) ու Սեմ Ֆոգգ մասնավոր հավաքածուում (1

---

[11] Հայաստան, Պարսկաստան, Սիրիա, Իսրայել, Վրաստան, Ռուսաստան, Հոլանդիա, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա, Վատիկան, Ֆրանսիա, Պորտուգալիա, Անգլիա, Իռլանդիա եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներ։

[12] Այսինքն՝ 30 Աստվածաշունչ եւ 200 Ավետարան։

[13] Հմմտ. Յուցակ Հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա. եւ Բ., կազմեցին ***Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան,*** Երեւան, 1965-1970, **Գ. Տէր-Վարդանեան**, *Նոր Ջուղայի եւ յարակից շրջանների հայկական ձեռագրական արուեստը.* Նիւթեր Մաշտոցեան Մատենադարանի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ցուցահանդէսների, Յուլիս – Օգոստոս, 2005, Երեւան, 2005, *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի,* հ. Գ., կազմեց *Ա. Մալխասեան*, Երեւան, 2007։

[14] 1976 թ. տվյալների համաձայն, տե՛ս **Բ. Զուգասզյան**, «Յուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց». – «Բանբեր Մատենադարանի», հ. 15, 1986, էջ 343-349։

Ավետարան), Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում (1 Ավետարան), Քեմբրիջի համալսարանի գրադարանում (1 Ավետարան) եւ Թագուհու Քոլեջի Սըր Հարոլդ Ուոլտեր Բեյլի հավաքածուում (մեկ Ավետարան), Դուբլինի Չեստեր Բիտտի գրադարանում (3 մատյան). Ամերիկայի Միացյալ Նահանգների տասնմեկ տարբեր հավաքածուներում՝ Սան Ֆրանցիսկոյի Ալբերտ Նալբանդյանի մասնավոր հավաքածուում (2 ձեռագիր), Բալթիմորի Ուոլտեր պատկերասրահում (2 մատյան), Չիկագոյի Համալսարանի գրադարանի Է. Ի. Գուդսպիդի հավաքածուում (1 Ավետարան), Նյու Յորքի Փիրպոնտ Մորգան գրադարանում (3 ձեռագիր) եւ Վարդան Վարդանյանի մասնավոր հավաքածուում (1 Ավետարան), Լոս Անջելեսի Ջոն Փոլ Գետտի թանգարանում (2 մատյան), եւ Փրինստոնի ու Լոս Անջելեսի համալսարանների գրադարաններում (1 եւ 2 ձեռագիր)[15]:

Այդպիսով, գիտական աշխատանքը կատարվում է հետեւյալ կարգով՝

- ճշտվում են նկարիչ-վարպետների հեղինակային պատկանելությունը, ինչպես նաեւ նրանց հետ աշխատող գրիչների, մանրանկարիչների, կազմողների, վերանորոգողների եւ պատվիրատուների անունները.
- ուսումնասիրվում են վարպետների, նրանց ուսուցիչների, աշակերտների եւ պատվիրատուների կողմից գրված հիշատակարանները.
- բացահայտվում են Նոր Ջուղայի հետ ունեցած մյուս մանրանկարչական դպրոցների փոխադարձ կապը, ինչպես նաեւ բյուզանդական, եվրոպական պատկերագրական սխեմաների եւ արաբա-պարսկական դեկորատիվ գեղանկարչության ազդեցությունը աշխատանքների վրա[16].
- հետազոտվում եւ դասակարգվում են պատմողական մանրանկարների, ավետարանիչների, սրբերի, անվանաթերթերի, խորանների եւ լուսանցազարդերի պատկերագրական համակարգերը.
- քննության են ենթարկվում մանրանկարների ոճը եւ տեխնիկան:

Այս ծրագրի իրականացումը պահանջում է նշված պատկերազարդ Ավե-

---

[15] Նպատակահարմար չէ այստեղ ներկայացնել վերոհիշյալ հավաքածուների մատենագիտության ցանկը, շարադրանքի նյութի խտության պահպանման նպատակով, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող հավաքածուների (տե՛ս ծնթ. 12 եւ 13):

[16] Հիմնական գրականությունը՝ G. Schiller, *Iconography of Christian Art,* vols. I-II, London, 1971-1971; **В. Н. Лазарев**, *История византийской живописи,* т. I, Москва, 1986; *Lexikon der christlichen Ikonographie,* (Allgemeine Ikonographie, Bd. I-IV. Ikonographie der Heiligen, Bd. V-VIII), Rom – Freiburg – Basel – Wien, 1994; **Н. В. Покровский**, *Евангелие в памятниках иконографии, преимущественно византийских и русских*, Москва, 2001; **M. Arakelian**, "The Representations of Warriors, Their Costumes and Ornament in the Miniatures of the XVIIth Century Armenian Artist Mesrop Xizanc'i". – *Revue des Études arméniennes,* Nouvelle serie 27 (Paris, 1998-2000), pp. 379-392, illus. 1-5.

տարաններին ուսումնասիրությունն իրականացնել մի շարք եվրոպական, միջինարեւելյան եւ ամերիկյան գրադարաններում եւ հետազոտել մասնագիտական կարեւոր նյութեր, որոնք բացակայում են Հայաստանում եւ Իսրայելում։

Նախնական ուսումնասիրությունը վերոհիշյալ մանրանկարիչների գործերի վերաբերյալ ակնհատ է դարձնում Նոր Ջուղայի դպրոցի կարեւորությունը եւ թույլ տալիս մանրանկարիչների ստեղծագործական ոճի գործընթացի զարգացումը քննել Նոր Ջուղայի դպրոցի ձեւավորման եւ զարգացման հարթության վրա։

Նկ. 1
«Երկրորդ գալուստ»
Ավետարան, 1628 թ., նկարիչ՝ Մեսրոպ Խիզանցի
Վենետիկ, Մխիթարյան միաբանություն (Ձեռ. Քյուրտյան № 154, էջ 16բ)

Նկ. 2
«Դժոխքի ավերումը»
Ավետարան, 1650 թ., նկարիչ՝ Գասպար երեց
Վաղարշապատ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (Ձեռ № 38, էջ 7ա)



Նկ. 3
«Ղուկաս ավետարանիչ»
Աստվածաշունչ, 1648 թ., նկարիչներ՝ Հայրապետ Ջուղայեցի
Վենետիկ, Մխիթարյան միաբանություն (Ձեռ. № 623 (3), էջ 517բ)



Նկ. 4
«Մարկոս ավետարանիչ»
Ավետարան, 1672-1674 թթ., նկարիչ՝ Մարտիրոս Բահանա
Վիեննա, Մխիթարյան միաբանություն (Ձեռ. № 978, էջ 91բ)



Նկ. 5
«Խաչելություն»
Ավետարան, 1639-1644 թ., նկարիչ՝ Բարղամ
Փարիզ, Ազգային գրադարան (Ձեռ. Smith-Lesouuf 252, էջ 193ա)

Նկ. 6
«Մոգերի երկրպագությունը»
Հայսմավուրք, 1630 թ., նկարիչ՝ Մեսրոպ Խիզանցի
Նոր Ջուղա, Սուրբ Ամենափրկիչ վանք (Ձեռ. № 466 (241), էջ 270բ)



Նկ. 7
«Խաչելություն»
Ավետարան, 1625-1629 թթ., նկարիչ՝ Մինաս
Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք (Ձեռ. № 2348, էջ 311բ)

Նկ. 8
«Թաղում»
Ավետարան, 1605 թ., նկարիչ՝ Խաչատուր Բահանա
Նոր Ջուղա, Սուրբ Ամենափրկիչ վանք (Ձեռ. № 670 (104), էջ 12բ)